

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԻՄԱՑ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

2009 թվականի դեկտեմբերի 11-ը

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմերը

ընդունելով միջազգային առեստրի համընդհանուր նորմերը եւ կանոնները

ղեկավարվելով «Մաքսային միությունում ապրանքների արտահանման եւ ներմուծման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 5-րդ հոդվածով

ելնելով Մաքսային միության անդամ պետությունների բյուջեներ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց անուղղակի հարկերի ժամանակին եւ ամբողջությամբ մուտքագրման փոխադարձ շահագրգռվածությունից

ցանկանալով այդ նպատակով աջակցել միմյանց

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն Արձանագրության նպատակներով գործածվում են հետեւյալ եզրույթները՝

«**անշարժ գույք**»՝ հողատարածքներ, ընդերքի հատվածներ, մեկուսի ջրային օբյեկտներ եւ այն ամենը, ինչն ամուր կցված է հողին, այսինքն այն օբյեկտները, որոնց տեղափոխումն առանց դրանց նշանակությանն անհամաչափ վնաս պատճառելու անհնար է, այդ թվում՝ անտառներ, բազմամյա տնկարկներ, շենքեր, շինություններ, խողովակաշարեր, հոսանքի գծեր, ձեռնարկություններ, ինչպիսիք են գույքային համալիրները եւ տիեզերական օբյեկտները,

«շարժական գույք»՝ իրեր, որոնք չեն վերաբերում անշարժ գույքին, տրանսպորտային միջոցներին,

«տրանսպորտային միջոցներ»՝ ծովային եւ օդային նավեր, ներքին նավարկության նավեր, խառը «գետ-ծով» տիպի նավարկության նավեր, երկաթուղային շարժակազմի միավորներ, ավտոբուսներ, ավտոմեքենաներ՝ ներառյալ կցանքներ եւ կիսակցանքեր, բեռնարկղեր,

«աուդիտորական ծառայություններ»՝ հաշվապահական հաշվառման, հարկային եւ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի անցկացման ծառայություններ,

«հաշվապահական ծառայություններ»՝ հաշվապահական հաշվառման կազմակերպման, վարման, վերականգման, հարկային, ֆինանսական եւ հաշվապահական հաշվետվությունների կազմման եւ (կամ) ներկայացման ծառայություններ,

«դիզայներական ծառայություններ»՝ արտադրանքի գեղարվեստական ձեւի, արտաքին տեսքի, շենքերի ճակատային մասի, շինությունների ներքին հարդարանքի նախագծման ծառայություններ, գեղարվեստական նախագծում,

«ճարտարագիտական ծառայություններ»՝ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) արտադրման եւ իրացման գործընթացի նախապատրաստման, արդյունաբերական, ենթակառուցվածքային, գյուղատնտեսական եւ այլ օբյեկտների շինարարության եւ շահագործման նախապատրաստման ինժեներախորհրդատվական ծառայություններ, ինչպես նաեւ նախնական նախագծային եւ նախագծային ծառայություններ (տեխնիկատնտեսական հիմնավորումների պատրաստում, նախագծային եւ կոնստրուկտորական մշակումներ, տեխնիկական փորձարկումներ եւ դրանց արդյունքների վերլուծություն),

«խորհրդատվական ծառայություններ»՝ պարզաբանումների, առաջարկությունների եւ խորհրդատվության այլ ձեւերի տրամադրման ծառայություններ՝ ներառյալ կառավարչական, տնտեսական, ֆինանսական (այդ թվում հարկային եւ հաշվապահական) հարցերով, ինչպես նաեւ պլանավորման, կազմակերպման եւ գործարարության իրականացման, անձնակազմի կառավարման հարցերով անձի հնարավորությունների եւ (կամ) խնդիրների որոշումը եւ (կամ) գնահատումը,

«շուկայագիտական ծառայություններ»՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների արտադրման եւ շրջանառության համար անհրաժեշտ տնտեսական

պայմանների ստեղծմանն ուղղված միջոցառումները սահմանելու նպատակով ապրանքերի, աշխատանքների, ծառայությունների արտադրման եւ շրջանառության ոլորտում հետազոտության, վերլուծության, պլանավորման եւ կանխատեսման հետ կապված ծառայություններ՝ ներառյալ ապրանքերի, աշխատանքների, ծառայությունների բնութագիրը, գնային ռազմավարության եւ գովազդային ռազմավարության մշակումը,

«գիտահետազոտական աշխատանքներ»՝ պատվիրատուի տեխնիկական առաջադրանքով պայմանավորված գիտական հետազոտությունների իրականացում,

«փորձանախագծային եւ փորձատեխնոլոգիական (տեխնոլոգիական) աշխատանքներ»՝ նոր արտադրանքի նմուշի, դրա կամ նոր տեխնոլոգիայի համար նախագծային թղթաբանության մշակում,

«գովազդային ծառայություններ»՝ անձանց անորոշ շրջանակի համար նախատեսված եւ ցանկացած միջոցներով եւ ցանկացած ձեով ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ապրանքների, ապրանքային նշանների, աշխատանքների, ծառայությունների նկատմամբ հետաքրքրություն ձեւավորելու եւ պահպանելու համար կոչված տեղեկատվության ստեղծման, տարածման եւ տեղադրման ծառայություններ,

«տեղեկատվության մշակման ծառայություններ»՝ տեղեկատվության հավաքագրման եւ ընդհանրացման, տեղեկատվական զանգվածների (տվյալների) համակարգման եւ այդ տեղեկատվությունը մշակելու արդյունքներն օգտատիրոջ տնօրինությանը տրամադրման ծառայություններ,

«իրավաբանական ծառայություններ»՝ իրավական բնույթի ծառայություններ, այդ թվում՝ խորհրդատվություն եւ պարզաբանումների տրամադրում, փաստաթղթերի պատրաստում եւ փորձաքննություն, պատվիրատուների շահերի ներկայացում դատարանում:

Հոդված 2

Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց անուղղակի հարկերի գանձումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետությունում, որի տարածքը ճանաչվում է աշխատանքների, ծառայությունների իրականացման վայր (բացառությամբ սույն Արձանագրության 4-րդ հոդվածում նշված աշխատանքների):

Աշխատանքները կատարելիս, ծառայությունները մատուցելիս հարկային բազան, անուղղակի հարկերի դրույքաչափերը, դրանց գանձման կարգը եւ հարկային արտոնությունները (հարկերից ազատումը) սահմանվում են Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքը ճանաչվում է աշխատանքների, ծառայությունների իրականացման վայր, եթե այլ բան նախատեսված չէ սույն Արձանագրությամբ:

Հոդված 3

1. Մաքսային միության անդամ պետության տարածքը ճանաչվում է աշխատանքների, ծառայությունների իրականացման վայր, եթե՝

1) աշխատանքները, ծառայություններն անմիջապես կապված են այդ պետության տարածքում գտնվող անշարժ գույքի հետ:

Սույն ենթակետի դրույթները կիրառվում են նաեւ անշարժ գույքի վարձակալման, վարձույթի եւ այլ հիմքերով օգտագործման տրամադրման նկատմամբ:

2) աշխատանքները, ծառայություններն անմիջապես կապված են այդ պետության տարածքում գտնվող շարժական գույքի, տրանսպորտային միջոցների հետ:

3) մշակույթի, արվեստի, ուսուցման (կրթության), ֆիզիկական կուլտուրայի, զբոսաշրջության, հանգստի եւ սպորտի ոլորտներում ծառայությունները մատուցված են այդ պետության տարածքում:

4) այդ պետության հարկատուի (վճարողի) կողմից ձեռք են բերվում.

խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, ճարտարագիտական, գովազդային, դիզայներական, շուկայագիտական ծառայություններ, տեղեկատվության մշակման ծառայություններ, ինչպես նաեւ գիտահետազոտական, փորձանախագծային եւ փորձատեխնոլոգիական (տեխնոլոգիական) աշխատանքներ,

ԷՀՄ-ի եւ տվյալների բազաների (հաշվիչ տեխնիկայի ծրագրային միջոցների եւ տեղեկատվական արտադրանքի) համար ծրագրերի մշակման, դրանց հարմարեցման եւ փոփոխման, նմանատիպ ծրագրերի եւ տվյալների բազաների պահպանման համար աշխատանքներ, ծառայություններ,

անձնակազմի տրամադրման ծառայություններ այն դեպքում, երբ անձնակազմն աշխատում է գնորդի գործունեության վայրում:

Սույն ենթակետի դրույթները կիրառվում են նաեւ՝

արտոնագրերի, լիցենզիաների, պետության կողմից պաշտպանվող արդյունաբերական սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքները հավաստագրող այլ փաստաթղթերի, ապրանքանիշերի, ապրանքային նշանների, ֆիրմային անվանումների, սպասարկման նշանների, հեղինակային, հարակից իրավունքների կամ այլ նմանատիպ իրավունքների փոխանցման, տրամադրման, զիջման ժամանակ,

շարժական գույքի վարձակալման, լիզինգի եւ այլ հիմքերով օգտագործման տրամադրման ժամանակ՝ բացառությամբ տրանսպորտային միջոցների վարձակալման, լիզինգի եւ այլ հիմքերով օգտագործման տրամադրման,

սույն ենթակետով նախատեսված աշխատանքների, ծառայությունների կատարման համար պայմանագրի հիմնական մասնակցի անունից այլ անձ ներգրավող անձի կողմից ծառայությունների մատուցման ժամանակ,

5) աշխատանքներն իրականացվում են, ծառայությունները մատուցվում են այդ պետության հարկատուի (վճարողի) կողմից, եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածի 1-ին կետի «1» – «4» ենթակետերով:

Սույն ենթակետի դրույթները կիրառվում են նաեւ տրանսպորտային միջոցների վարձակալման, լիզինգի կամ այլ հիմքերով օգտագործման տրամադրման ժամանակ:

2. Աշխատանքների (ծառայությունների) իրականացման վայրը հաստատող փաստաթղթերն են՝

Մաքսային միության անդամ պետությունների հարկատուների (վճարողների) կողմից կնքված՝ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման պայմանագիրը, աշխատանքների իրականացման, ծառայությունների մատուցման փաստը հաստատող փաստաթղթերը,

Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

Հոդված 4

1. Այն պատվիրված հումքի վերամշակման աշխատանքները, որոնք ներմուծվել են Մաքսային միության մի անդամ պետության տարածքից Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք՝ հետագայում վերամշակված արտադրանքը մեկ այլ պետության տարածք արտահանելու նպատակով՝ հարկվում են ավելացված արժեքի հարկով (այսուհետ՝ ԱԱՀ) սույն հոդվածում նշված փաստաթղթերի հիման վրա՝ «Մաքսային միությունում ապրանքների արտահանման եւ ներմուծման անուղղակի հարկերի գանձման կարգի եւ դրանց վճարման հսկողության մեխանիզմների մասին» արձանագրության 1–ին հոդվածի նորմերի համաձայն: Ընդ որում, ԱԱՀ-ի հարկային բազան սահմանվում է որպես պատվիրված հումքի վերամշակման աշխատանքների կատարման արժեք:

2. Նշված աշխատանքների նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ կիրառելու հիմնավորվածության հաստատման համար հարկային մարմիններ հարկային հայտարարագրի (հաշվարկի) հետ միասին ներկայացվում են հետեւյալ փաստաթղթերը (դրանց օրինակները).

Մաքսային միության անդամ պետությունների հարկատուների (վճարողների) միջեւ կնքված պայմանագիրը,

աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման փաստը հաստատող փաստաթղթերը,

սույն հոդվածի 1–ին ենթակետում նշված ապրանքների արտահանումը (ներկրումը) հաստատող փաստաթղթերը,

«Մաքսային միության անդամ պետությունների հարկային մարմինների միջեւ անուղղակի հարկերի գծով վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային տարբերակով տեղեկատվության փոխանակման մասին» արձանագրության 1–ին հավելվածի ձեռով կազմված՝ ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման մասին դիում-հայտարարություն՝ վճարման վերաբերյալ հարկային մարմնի նշումով (բնօրինակով կամ պատճենով՝ Մաքսային միության անդամ պետությունների հարկային մարմինների հայեցողությամբ),

պատվիրված հումքի վերամշակված արտադրանքի՝ Մաքսային միության անդամ պետությունների սահմաններից դուրս արտահանումը հաստատող մաքսային (բեռնամաքսային) հայտարարագիրը,

Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

3. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվում հարկային մարմին, եթե հարկային հայտարարագիր չներկայացնել ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ կիրառելու հիմնավորվածությունը հաստատող փաստաթղթերի հետ միասին բխում է Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությունից, որի տարածքում իրականացվում է վերամշակումը:

Հոդված 5

Այն դեպքում, երբ հարկատուի (վճարողի) կողմից կատարվում, մատուցվում են մի քանի տեսակի աշխատանքներ, ծառայություններ, որոնց հարկումը կարգավորվում է սույն Արձանագրությամբ, եւ մի տեսակի աշխատանքների, ծառայությունների իրականացումն օժանդակ բնույթ է կրում այլ տեսակի աշխատանքների, ծառայությունների իրականացման նկատմամբ, ապա օժանդակ աշխատանքների, ծառայությունների իրականացման վայր է ճանաչվում հիմնական աշխատանքների, ծառայությունների իրականացման վայրը:

Հոդված 6

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Արձանագրության մեջ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Կողմերի իրավասու մարմիններն առնվազն տարին մեկ անգամ քննարկում են սույն Արձանագրության մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու նպատակահարմարության հարցը:

Հոդված 7

Սույն Պայմանագրի մեկնաբանման եւ (կամ) կիրարկման հետ կապված վեճերը լուծվում են շահագրգռված Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով: Այդ խորհրդակցությունների կամ բանակցությունների մեկնարկից վեց ամսվա ընթացքում համաձայնության չգալու դեպքում ցանկացած շահագրգիռ Կողմի

նախաձեռնությամբ վեճը փոխանցվում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 8

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից՝ Կողմ պետությունների կողմից սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման վերաբերյալ:

Հոդված: 9

Սույն Արձանագրությունը ենթակա է կիրառման «Մաքսային միությունում ապրանքների արտահանման եւ ներմուծման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

Հոդված 10

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2009 թվականի դեկտեմբերի 11-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն լեզվով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, լինելով սույն Արձանագրության ավանդապահը, կուղարկի Կողմերից յուրաքանչյուրին սույն Արձանագրության հաստատված պատճենը:

Բելառուսի Հանրապետության
Կառավարության կողմից

(Ստորագրություն)

Ղազախստանի Հանրապետության
Կառավարության կողմից

(Ստորագրություն)

Ռուսաստանի Դաշնության
Կառավարության կողմից

(Ստորագրություն)